Արձանագրություն N 2

ԾՔ-ԳՀԱՊՁԲ-18/16 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով Ծաղկաձոր համայնքի կարիքների համար համակարգիչների և բազմաֆունկցիոնալ տպիչ սարքերի ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք.Ծաղկաձոր 09 օգոստոսի 2018թ.

ժամը 10:00

Մասնակցում էին հանձնաժողովի

Նախագահ՝ Գ.Հայրապետյան/ԳԱՊ/

անդամներ՝ Ն.Խաչատրյան /ԲԱ /

Վ.Ամիրխանյան /ԲԱ/

Է.Հովհաննիսյան /ԳԱ/

Ա.Մեսրոպյան /ԳԱ /

քարտուղար՝ Ա.Ավետիսյան

1. **Տեղեկություններ ԾՔ-ԳՀԱՊՁԲ-18/16 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման մասին**

(Գ.Հայրապետյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով, հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2018 թվականի օգոստոսի 09-ին, ժամը 10:00-ին, Ծաղկաձորի համայնքապետարան, ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

2. **ԾՔ-ԳՀԱՊՁԲ-18/16 ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին**

(Գ.Հայրապետյան)

Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

h/h	Մասնակիցների անվանումը
1	<<Կոմպասս>> ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

3. **Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին**

(Գ.Հայրապետյան)

Ընդունել ի գիտություն, որ

3.1 <<Կոմպասս>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

3.2 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի հայտը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել է հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
<<Կոմպասս>> ՍՊԸ	Բավարար

4. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Գ.Հայրապետյան)

4.1 Գնանշման հարցման ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացվել է հետևյալ գնային առաջարկը.

ՀՀ դրամ

Չափաբաժին	Մասնակցի անվանումը	Նախահաշվային գինը	Առաջարկված գինը առանց ԱԱՀ	ԱԱՀ	Առաջարկված գինը
1.«Համակար գիչներ N1»	<<Կոմպասս>> ՍՊԸ	800000	1050000 /մեկ միլիոն հիսուն հազար/	210000 /երկու հարյուր տասը հազար/	1260000 /մեկ միլիոն երկու հարյուր վաթսուն հազար/

Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկում չկան թվաբանական անճշտություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

5. Միաժամանակյա բանակցություններ վարելու մասին

(Գ.Հայրապետյան)

Հանձնաժողովը ուսումնասիրեց և արձանագրեց, որ՝

-Մասնակցի առաջարկած գնային առաջարկը գերազանցում է նախահաշվային գինը:

-Ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման >> կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել և մասնակցին ծանուցել և հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

6. ԾՔ-ԳՀԱՊՁԲ-18/16 ծածկագրով հայտարարված մրցույթի 2-րդ չափաբաժինը չկայացած հայտարարելու մասին

(Գ.Հայրապետյան)

Հանձնաժողովը որոշեց՝

Համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի /ոչ մի հայտ չի ներկայացվել/ **ԾՔ-ԳՀԱՊՁԲ-18/16** ծածկագրով գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժինը /բազմաֆունկցիոնալ տպիչ սարքերի ձեռքբերում/ հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

7. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը,ժամը և վայրը հաստատելու մասին

(Գ.Հայրապետյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2018 թվականի օգոստոսի 14-ին, ժամը 11:00-ին, Ծաղկաձորի համայնքապետարանի վարչական շենքում, ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ----------Գ.Հայրապետյան

անդամներ՝ ----------Ն.Խաչատրյան

----------Վ.Ամիրխանյան

----------Է.Հովհաննիսյան

----------Ա.Մեսրոպյան

քարտուղար՝----------Ա.Ավետիսյան